

ՀԱՅՈՒԹԵՍՈՒՄԱՐ

ՊԵՐ ԶԵՐԻ



361.5
ՀԱՅՈՒԹԵՍՈՒՄ


ՊԵՐ ԶԵԿԻՔ

Հ. ԻԳՆԱՏԻՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՓԱՓԱՇԵԱՆՑ
ԴԱԽՏԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆՔ

ՆՊԱՍՏԻՔ

ԱԶՆՈՒԱԿԱՆ ՊԱՐՈՆ ՊԵՏՐՈՍԻ ԵՈՒՍՈՒԹԵԱՆՑ

Խմբի
878



ԴԱՅԵՑՏԻԿ

Դ ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ԴԱՅԵՑՏԻԿ

Ն ո ւ է ր

Լիզառնի Գալուստ Կիւլպէնկեան
Հիմնարկութեան կողմէ
Հայկական ՍՍՌ Գիտութիւնների
Ակադեմիայի Մատենադարանին

1966

Յ Ա Ռ Ե Վ Ա Բ Ե Ն

Յաջողակութիւն բնաւորութեան Ղզդիս 'ի տուրեառս վաճառականութեան
վկայեալ է 'ի գիրս եւրոպեանց, պանծալի գովեստս արձանագրելով ընդ աչալուր
ճարտարութիւն և ընդ անխօնջ վաստակս մերազդի վաճառականաց 'ի ստացումն գոյ-
լց, և ընդ արթնամիտ զգուշաւորութիւն նոցա առ 'ի վնասուէ • որք են կրկին կա-
րեւոր պայմանիք, յորս հիմնելի են ամենայն տուրեառոք: Ղյում գովելի ձրից արժան
էր արդեօք բազմօք յառաջադէմ զարդանալ՝ եթէ ըստ յաջողակութեանն առձեռն
պատրաստ լինէին և գործիք կարեւորք 'ի նոյն պէտս • այն ինքն է՝ գիրք հաշուփ և հա-
մարոյ • առանց որոյ՝ կոյր և անսպիտան է վաճառականութիւն: Ի՞սկ առ 'ի չգոյէ կար-
դաւորեալ հաշուեգրոց՝ յաջողամտութիւն վաճառականաց Ղզդիս գեգերի յայլեայլ
շաւիլս դժուարակոխս և տարժանելիս 'ի գտանել հնարս շահավաճառութեան :
Ի՞ն՝ որք նորաստեղծ և ինքնահնար հաշուետումարս վարեն • զոր նոցա միայնոյ է իմա-

նալ՝ և ոչ այլում։ Են և այլք, որոց տեսեալ զկարեւորութիւն կանոնաւոր հաշուե-
գրոց՝ ծանր աշխատութեամբ միտ դնեն ուսանել յօտար ազգաց, և առ կարօտութեան
և անգիտութեան սեփականեալ բառից որք սովոր են վարիլ՝ ի հաշուետումարս, ՚ի
կիր առնուն զօտարաձայն հնչմունս խտալական և կամ պարսկական բառից + վասն որոյ
և անօդուտ համարի յազգային պէտս հասարակաց։ Յոլովագոյնք ևս առ յօժարա-
մառութեան ՚ի տուրեառութիւն՝ նախ քան զըստ պատշաճի ուսումն և աշակերտու-
թիւն ձեռներէց եղեալ վաճառականութեան՝ անպառուղ քրտամբք ձգին ՚ի մնանկու-
թիւն։

Չահք և ստացուածք ո՞րչափ ցանկալի իցեն վաճառականին, և յորդորիչք ՚ի
տուրեառութիւն, այնչափ առաւել կորուստք և վտանգք ունին զգուշաւորութիւնս
ազգել՝ ի վաճառականն, և արթնամիտ խորհրդով՝ ՚ի ձեռն գիտնական կարդաց և կա-
նոնաց մատչիլ ՚ի գործադրութիւն։ Ապաքէն առած է ռամիկ ժողովրդեան, թէ
դրամք զգրամս շահին + այլ ոչ յանհմուտ ձեռս + զի ճարտարութեան մտաց է արգա-
սաւորել զգրամսն + և պտղարեր առնել զերկս աշխատութեան վաճառականին։

Ա աճառականութիւնն է մի ՚ի գլխաւոր գործառնութեանց մարդկային ընկե-
րութեանն + մանաւանդ թէ առիթ և միջնորդ համարի բարեբաստութեան հասար-
կաց, որով գաւառք և քաղաքք փոփոխ հաղորդակցութեամբ նպաստամատոյց լինին


միմեանց : Առ ձեռնհաս լինելոյ այսպիսում կենցաղօգուտ գործառնութեան, չէ՞ բա-
ւական դրամաճոխ լինելն, այլ պահանջի ուսումն և հմտութիւն կարգի և կանոնաց վա-
ճառականութեան . զի ըստ իմաստնաբար վկայելոյ ուրումն՝ կանոնագիտութիւն տուր-
եառութեան կարեւորագոյն համարելի է քան զոլովութիւն դրամոց . որչափ զի ա-
ռանց կարգի և կանոնաց յաճախութիւն գոյից և ստացուածոց դիւրաւ սպառի : Իսկ
ընդ հակառակն՝ սովոր է գտանել յաջողութիւն բազում, որ 'ի նուազ դրամագլուխն
յաւելուցու զկարգ և զկանոն վաճառաշահութեան :

Այսմ կարգի և կանոնաց նախ առաջին հետամուտք և մտադիրք եղեն իտալա-
ցիք . որոց առեալ զճաշակ տուրեառ շահաւետութեան, հանդիսացան խնամաճուք
սլայծառութեան կենցաղօգուտ արհեստիս, պիտանի և կարեւոր ուսումն սահմանե-
լով վասն նորա . կանոնափակ կարգօք ճոխացուցեալ զմատեանս տուրեառութեան,
յորմէ եղաւ նմա անունս՝ Իտալական հաշուեգիր . սակայն կիրառութիւնն ծաւա-
լեցաւ ընդ ամենայն եւրոպիա, որպէս և յայլ մասունս աշխարհի, ուր ամենայն վա-
ճառականք իբր 'ի հազար ամաց հետէ խնամով զհետ են ուսման և պահպանութեան
կանոնաց նորա . մանաւանդ թէ՝ նորանոր կարգօք նկրտին ճոխացուցանել և զարդա-
րել ամըստամէ, որպէս յայտ է 'ի զանազան հաշուեմատենից, զորս 'ի լոյս ընծայե-
ցին և ընծայեն անխոնջ երկասիրութեամբ :

Հայսմ փութոյ յորդորեալ և մեր հաղորդակիցս բարեբաստութեան տեսանել
զհամօրէն համազդիս , յօժարեցաք զբազմամեայ փափաքս նոցա այսպիսում մատենի՝
արդ՝ի գլուխ հանել ։ ամօք յառաջ ձեռնարկեալ նախ յիտալական հաշուետումարն ,
որ կոչի Բագրիթթուռա Տօբրիա ։ և աւարտեալ զայն լիակատար վարդապետու-
թեամբք և ճոխադոյն օրինակօք , և այժմ զհամառօտ և զդիւրին կարդս կանոնա-
դրութեան այսր Պարզագիր հաշուետումարիս , զոր՝ի մեր աւուրս Ենդղիացի ոմն
Եղուարդոս Շառվմաս Ճիօնս անուանեալ , զառաջնն ընծայեաց՝ի լոյս յամին 1796 .
որ թէպէտ ։ նորակարդ է քան զնախնիմն , այլ ոչ կարի օտարաշաւիդ յիտալական
հաշուետումարէ ։ միօրինակ ձեռնտու և յարմարական առ ամենայն վիճակ մանրավա-
ճառ և բազմակոյտ տուրեառութեան ։ զըրոյ զկարդ և զկանոն աւանդեսցուք յա-
ռաջլիկայդ :

Յ Ա Ր Ե Կ

Լանիսուսումն	1	Կարդ Մայրհաշիւ տոռւմարին	12
Օրհաշիւ	2	Կաննք կիրառութեան Մայրհաշուին	13
Մայրհաշիւ	3	Օրհաշիւ 1826. Տարւոյն	21
Կարդ Օրհաշիւ տոռւմարին	4	Մայրհաշիւ 1826. Տարւոյն	45
Կաննք յիշատակագրութեան Օրհաշուին	6		



ՀԱՅՈՒԹԵՑԱՌՄԱՐ

Պ Ա Ր Զ Ա Գ Ի Բ

ԿՐԵԽՈՒԹՈՒԹՅՈՒՆ

ա. Առ գիւրիմաց հասումն նորավարժից, և որոց անդէտք իցեն այսպիսի գիտութեանց՝ կարեոր համարիմք աստատին՝ ի սկզբան ծանուցանել համաւօտիւ, թէ Հաշուետումարն զի՞նչ է, և առի՞նչ պիտանացու. և թէ ո՞ք իցեն ճարտարարուեստ հնարքն, որովք 'ի յայտ գան ուղղութիւնք և վրիպակք 'ի հաշուեգիրս :

բ. Հաշուետումար անուանի մատեանն, յորում գրաւոր և կանոնափակ կարգաւ բովանդակին ամենայն տուրեառք վաճառականին : Կարգաւորութիւն մատենիս խելամուտ առնէ զվաճառականն ոչ միայն հաշուի և հաղորդակցութեանն, զոր ունի ընդ այլս, այլև սեփական գոյիցն և ստացուածոց, որք տիրապէս իւրքն են :

գ. Հաշուետումար վաճառականաց՝ զոր սովորաբար վարեն եւրոպեանք, և կոչեն Արկնագիր կամ Արկնատումար⁽¹⁾ կարօտի բազում տետրակաց 'ի զանազան պէտո, իբր () ժանդակ⁽²⁾ () օրհաշիւ և Մայրհա-

Դ. (1) ՀԱՅՈՒԹԵՑՈՒՄԱՐ ԿՐԿՆԱԴԻՐ Կամ ԿՐԿՆԱՏՈՒՄԱՐ : Խտակըքն, Ըստինեաւու Տէքիս :

(2) ՕԺԱՆԴԱԿԱԴԻՐՔ, Կամ ՏԵՏՐԱԿԱԲ, զորս խտալցիք առուանեն Լիուի Աշուեւանի, են սյսոբիկ: ա. Գիրք Առկել,

ըստ խտալ՝ Լէտոս Գուստա, յորում նշանակին գրամք, զոր ընդունիք ոք յայլմէ, և կամ վճարէ ոյլում: բ. Գիրք Պանդյի: ըստ խտալ՝ Լէտոս Գուստա, յորում նշանակին հաշուեգարձ շըր ջանքն, ոք մնին 'ի Պանդօ Ճիւս անուանեալ վաճառասեղին

շիւ⁽³⁾ գրոց • բայց առաջիկայ հաշուետումարս Պարզագիր⁽⁴⁾, անուանեալ չունի պէտս այլում, բաց յերկուց աստի, որք են (յրհաշիւ և Վայրհաշիւ, յորս բովանդակին ամենայն կարեորքն ՚ի Տուրեառութիւն :

Օ Բ Հ Ա Ը Ն Ի Ւ

Ղ. (յրհաշիւ կոչի մատեանն, որ վարի առ՚ի պէտս յիշատակագրութեան⁽⁵⁾ առօրեայ գործողութեանց տուրեառից : Հայս մատեան կարեոր արձնութեան պէտք են ՚ի հիմնելն և ՚ի յիշատակագրել նախ առաջն զնշգրիտ հաշիւ Պարամագլուսոյն⁽⁶⁾, կամ դոյիցն և ստացուածոց . որովք սկիզբն առնէ ոք վաճառականութեան կամ տուրեառից . և ապա մի ըստ միովէ նշանակելի են ՚ի նմա ամենայն գործառնութիւնք, որք ՚ի ներքս ածեն զայլայլութիւն ՚ի Պարամագլուսին . եթէ ստացմամբ, եթէ վաճառմամբ դոյիցն, կամ վճար-

այն է Սեղան փոխանակութեան : դ. Գիրք Վաճառուց . ըստ իտու՞ . Լիդոս Վէդինէ . յորում նշանակին վաճառեալքն : դ. Գիրք Գնուածոց կամ Ստացուածոց . ըստ իտալ՝ . Լիդոս Գիրք Քէռէ . յորում նշանակին գնոց առեալքն : Ե. Գիրք Յանձնարարութեանց կամ Վաճառացանկի . ըստ իտ՝ . Լիդոս Ֆանինառէ . յորում նշանակին վաճառքն, որք ՚ի յանձնարարութենէ այլոց առափին առ նոսս : Ղ. Գիրք Քաղուածոց նաևնակաց . ըստ իտալ՝ . Լիդոս Գրանինձիս . յորում քաղուածաբար նշանակին վճարելիք և պահանջելիք յումերէ ըստ ծանուցանելոյ այլոց : Է. Գիրք Ապահովութեան, ըստ իտալ՝ . Լիդոս Սիդոնին . յորում նշանակին ամենայն գալինք ապահովութեան վաճառուց : Շ. Գիրք Տնական ծախուց . ըստ իտալ՝ . Լիդոս Լուժէնէ ո՞ի Գալաք . յորում նշանակին գումարք ծախուց տանն : Թ. Գիրք ծախուց Տուրեառութեան ըստ իտալ՝ . Լիդոս Ըսկէնէ ո՞ի Նէկէնէ : յորում նշանակին ծախուն եղեալք ՚ի նոյն պէտս : Ժ. Գիրք Մթերանոցի կամ Վարարի . ըստ իտալ՝ . Լիդոս Մուսային . յորում

նշանակին եգեալ և հանեալ վաճառք ՚ի շտեմարանայ : Ժ. Գիրք Պայմանաժամուց . ըստ իտալ՝ . Լիդոս Ըսկէնէնէ : յորում նշանակին պահանջելիք և վճարելիք ըստ պայմանեալ ժամուն : Ժ. Գիրք Մշանցորդաց . ըստ իտալ՝ . Լիդոս Ուկնինէ . յորում նշանակին մանցորդք պարտուց և պահանջից, որք ըստ ժամանակին չեն վճարեալք : Ժ. Գիրք Փոխանակագրոց . ըստ իտալ՝ . Լիդոս Գամդինէ . յորում նշանակին ամենայն տեսակի փոխանակագրոց :

(3) ՕՐՀԱԸՆԻ : իտ՝ . Ճիշուամէ : ամէկ . Բուշնամէ : ՄԱՅՐՀԱՆԸՆԻ : իտ՝ . Մայլամոս, կամ Մայլամոս, և Բառափենոս : ամէկ . Անտէքտէր :

(4) ՀԱԾՈՒԵՏՈՒՄԱՐ ՊԱՐԶԱԳԻՐ : իտ՝ . Ըսկէնէնէնուս ԱԿէ Քէմէ :

Ղ. (1) ՅԱԾՈՒԵՏՈՒՄԱՐՈՒԹԻՒՆ : իտալ՝ . Ուկնինէնոս : ամէ . Գայոյ :

(2) ԴՐԱՄՄԱԳԻՌՈԽԻՆ : իտ՝ . Գամդինէնէ : ամէ . Ակրմայէ :

մամբ և ընդունելութեամբ դրամոց, և կամ այլով զի՞նչ և իցէ օրինակաւ լինիցի ոք պարտապան ⁽³⁾ կամ պարտատէր ընդ ումեք: Ո՞յ անհնամք է թէ ՚ի տուրեառս լինիցի գործողութիւն ինչ, որոյ ելքն չիցէ պատշաճեալ՝ ՚ի պարտիս ⁽⁴⁾ կամ ՚ի պահանջու ուրուք. նմին իրի հարկաւ ինսդրի կարեռ ստուգութիւն՝ թէ գումար դրամոցն յիշատակագրելի յօրհաշիւն, որում ումեք տիրապէս անկ իցէ. արդեօք առ պարտատէն՝ թէ առ պարտապանն ընդ որում լեալ է դաշնադրութիւնն զգուշաւոր քննութիւն առնելով ստուգել տի զհանգամանս տուրեառութեանն, զլավիճանն, զարժէքն կամ զդին ստացեալ և վաճառեալ իրաց. և յետոյ յիշատակագրել զայն պարզ և որոշ բանիւ, զոր դիւրին իցէ պայծառ և առանց երկրայութեան իմանալ:

Պ Ե Յ Ի Հ Ա Շ Վ Ի Ւ Խ

Ե. Այրհաշիւ կոչի երկրորդ մատեանն, զոր վաճառականն ՚ի տուրեառս պարտի վարել. յորում ամենայն ցիր և ցան յիշատակագրութիւնք օրհաշուին կարգաւ ժողովին և ամփոփին յառանձին երեսս: Քանզի օրհաշիւ մատեանն թէպէտե հիմն է հաշուեգրոյ վաճառականութեան. բայց ինպնին միայնակ ըլունի երբէք վճարելինչ, եթէ վաճառականն ընտիցի և զմայրհաշիւն: Հայոս մատեան պարտ է զամենայն յիշատակագրեալն յօրհաշուին զատանել'ի միմեանց, և որիշ որիշ հաշուեմասամբք ⁽¹⁾ նշանակել զառանձին հաշիւ իւրաքանչիւր անձանց՝ ընդ որս կալաւ հաղորդակցութիւն ՚ի տուրեառս, գնելով զինչ, կամ ընդունելով զդրամ՝ և կամ վաճառելով ինչ ումեք, կամ հատուցանելով զդրամն. զայն ամենայն պարտ է հաւաքել՝ ՚ի տուրամբէ օրհաշուին, և փոխագրել՝ ՚ի մայրհաշիւն: ՚ի ձեռն այնը փոխագրութեան ⁽²⁾ մայրհաշիւ

(3) ՊԱՐՏԱՊԱՆ: իտ''. Տէպիթուէ: տՃ. Պօրձլու: ՊԱՐՏԱ-
ՏԷՐ: իտ''. Գրէպիթուէ: տՃ. Ալաճոդ սահիպի:

(4) ՊԱՄՏԻՒՔ: լուալ''. Տէպիթուէ, կամ Տառէ: տՃ. Պօրձ: ՊԱ-
ՀԱՆ. ՁԲ: իտ''. Գրէպիթուէ կամ Ալաճուէ: տՃ. Թալապ:

Ե. (1) ՀԱԾՈՒԵՄԱՄՆ: իտ''. Փառելին: տՃ. ՎԸԾՄ: Առ. ՀԱ-
Պէս կոչի առանձնական հաշիւ ուրուք, յորում ամփոփին ամե-
նայն տուրեառք նորա:

(2) ՓՈԽԱՐԴՐՈՒԹԻՒՆ: զօր իսաւացիք թառութեան: անուա-

մատեանն բովանդակէ յինքն զառհասարակ յիշատակագրութիւնս օրհաշուին՝ թէպէտև այլազգ դասաւորութեամբ և զետեղմամբ, որովում միայն վիճակ ամենայն առանձնաւորական հաշուից միանգամայն երեխն, այլ մարթ է յաւելլով՝ ի նոսա զգումար անվաճառ գոյիցն⁽³⁾ որ 'ի մթերանոց, առ օրին իմանալ զհամերէն վիճակ տուրեառութեանն, և խելամուտ լինել շահու կամ վսասու ձեռնարկեալ վաճառականութեանն:

Հ. Դ'արտարութիւն պարզագիր հաշուետումարիս է 'ի կարգն և 'ի նորաձև բաժանմունս աղիւսակաց և գաւազանաց նորա, յորս նշանակելի են ամսաթիւք, թղթահամարք, գումարք պարտեաց և պահանջից, գրանշանք⁽¹⁾ հաշուեմասանց. յորոց գասաւորութենէն, ոչ միայն յիշատակագրութիւնն լինին անշփոթք և բացայսաք, այլ թագուն վլիպակ ինչ, որ ակամայ սպրդեալ կայցէ 'ի հաշիւն, իւրովի 'ի յայտ գայ, և անաշխատ ուղղագրի: Խակ թէ զիա՞րդ և որով օրինակաւ զծագրելի իցեն աղիւսակքն և գաւազանք, թէ յօրհաշիւն և թէ 'ի մայրհաշիւն, ասսցուք յառաջիկայ հրահանգսդ:

Հ Բ Ա Հ Ե Կ Պ Ե

ԿԱՐԳ ՕՐՀԱԾԻՒ ՏՈՒՄԱՐԻՆ

Է. Պ գլուխ կամ 'ի ճակատ ամենայն երեսաց մակագրելի է բառս օրհածիւ. ապա սակաւիկ մի 'ի խոնարհ արձանագրելի է նախ՝ Անուն քաղաքին, յորում առնէ ոք զօրհաշիւն, և յետոյ 'ի նոյն տող առընթեր նմին նշանակելի է Ամսանունն և Տարին:

Նեն, ե մին 'ի գլուխոր գործողութեանց հաշուետումարին, ո. բով ամենայն յիշատակագրութիւնք օրհաշուին տարեալ լինին 'ի մայրհաշիւն:

(3) Անվաճառ ստացուածք կոչին, որք տակաւին չեն վաճառեալք, զգումար արժեից սոցա թէ որպէս պարտ իցէ ժողովել

և յաւելու 'ի հաշիւ վաճառելոցն, ունիս տեսանել 'ի թիւսն իդ. և լդ:

Հ. (1) Գրանշանք հաշուեմասանց են այրութենք, և կամ այլ նշանակելիք ինչ, որովք որոշին իւրաքանչւր անձինք և գլուխոր նիւթեր 'ի հաշուետումարս, զրոց ունիմք խօսիլ և կանո-

ը. Քամենայն երեսս գծագրելի են երրեակ գաւաղանք լայնարձակք . մին 'ի ձախակողմն , և երկուք յաջակողմն . առաջինն կամ ձախակողմեանն ունի վարիլ 'ի պէտս արձանագրութեան դումարի պարտեաց . ուստի 'ի գլուխն մակագրելի է բառս Պարտիք . իսկ յաջակողմեանց արտաքինն ունի ծառայել վասն գումարի պահանջելեաց . 'ի գլուխն այսր գաւաղանի դնելի է Պահանջք . և ներքինն ունի բովանդակել զերկոսին գումարսն միանդամայն՝ զպարտեացն և զպահանջից . վասն որոյ գրելի է 'ի գլուխն Պարտուպահանջք :

թ. Երկոքին ծայրաձիգ գլուխոր գաւաղանքն պարտեաց և պահանջից բաժանելի են 'ի չորս յանձկագոյն գաւաղանս , յորս ունին նշանակիլ գահեկանք , մանրափողք , գրանշանք հաշուեմասանց մայրհաշուին և թղթահամարը նորա : Իսկ ներքին գաւաղանն պարտուպահանջից բաշխելի է յերկուս . 'ի նշանակել միայն զդահեկանն և զմանրափողս :

ժ. Վիշնավյը երեասցն , որ է տեղի յիշատակագրութեանց օրհաշուին , խնդրէ 'ի ձախակողմն իւր զանձուկ գաւաղան 'ի պէտս ամսաթուոց , ուր օր ըստ օրէ նշանակեսցին թիւք ամսոյն առ իւրաքանչիւր յիշատակագրութիւնս : Եւ ամենայն երեսք օրհաշուին պարտին ունիլ զաւանձին թղթահամարս Փակագծիւ 'ի վերին կողմն թղթոյն :

ժա. Քետ զայսօրինակ գծագրութեան օրհաշիւ մատենին , 'ի կամիլն սկզբնաւորել պարտ է նախ առաջին դնել զամանաթիւն յիւրում գաւաղանի , և առընթել նմին յիշատակագրել զինչութիւն և զափ դրամագլասյն , որով սկիզբն առնէ ոք վաճառաւականութեան . և զգումար նորա պարտ է գրել 'ի գաւաղանն պարտուպահանջից : Քայս գաւաղան կարգաւ և անխտիր նշանակելի են ամենայն գումարք տուրեառութեանն , ողք հետզհետէ զիսպինն 'ի նմին առուր , եթէ պարտիք իցեն և եթէ պահանջք , յետոյ սկարապով յառանձնական ժամու և հանդարտ մտօք որոշելի են ամենայն յիշատակագրութիւնք , և ըստ նիւթոյ իրացն՝ գումարք նոցա զետեղելիք 'ի ծայրանիստ գաւաղանն յաջ և յահեակ . եթէ պարտիք 'ի ձախակողմն , և եթէ պահանջք՝ յաջակողմն . միանդամայն պարտ է յաւելուլ 'ի սկիզբն յիշատակագրութեանց ըստ բերելոյ իրացն՝ զմին յերկուց բառիցս՝ Պարտիք կամ Պահանջք . որպէս ունիս տեսանել յօրինակութ զինի :

նագրել 'ի թիւն (իշ) : Այս գիւտ նորահար է Անդղիացի խագրութեան հաշուիցն յօրհաշիւ մատենէ 'ի մայրհաշիւն : օրինակագրին առ 'ի յայտարարութիւն և 'ի ստուգութիւն փո-

Ժ՞ . ՚ Ա լրանալ ամսօրեայ առուրց՝ գումարելի են հաշիւք երեցունց գաւազանացն, յորոց երկոքինն, այսինքն՝ գումարը պարտեաց և պահանջից՝ եթէ յաւելցին 'ի միմեանս, պարտին հաւասարի գումարի պարտուպահանջից, որ 'ի ներքին գաւազանն (ը) : ՞ Օ նոյն գործողութիւն առնել պիտի և 'ի յաջորդ ամիս հետզիւտէ . այլև զգումար նախընթաց ամսոյն պարտ է յաւելուլ 'ի յաջորդն մինչեւ յերկուս և յերիս ամիսս, որպէս տեսանես 'ի գաղափար առաջիկայ օրհաշուխս + ուր սկսեալ 'ի յունվարէ մինչեւ յմարտ երեքամսեայ (1) միջոցաւ ժողովեալ եմք զհաշիւմն 'ի մի գումար բոլորական :

ԿԱՆՈՒՔ ՑԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՕՐՀԱՅՈՒԽՆ

Ժ՞ . ՞ իշատակագրութիւնք պարտին սկզբնաւորիլ 'ի յարամագլուսյն (ժ՞ . և ժ՞ .) . որով վաճառականն ձեռնամուխ լինի 'ի տուրեառութիւն . վասն որյ նախ առաջին նշանակելի է յօրհաշիւն՝ իբր պահանջք վաճառականին, բովանդակ գումար դրամոցն, զոր ունի վարել 'ի տուրեառուն : ՞ յո հաշիւ կամ գումար դրամոց վերադրելի է յանուն վաճառականին, կամ ըստ որում սովորութիւնն է այլոց (1), կարէ նշանակիլ ընդ անուամբս յարամագլուխս, որ ցուցանի զտէլ տուրեառիցն, որում անկ է դրամագլուխն այն :

Ժ՞ . ՞ յարամագլուխն՝ որ մոտանէ 'ի տուրեառու, հիմնէ զմանաւոր Վարկդ ինչ վաճառաւաշհութեան, վասն որյ այն արկդ լինի պարտապան այնմ գումարի դրամոց . զոր վաճառականն եղեալ է 'ի տուրեառու : Աւ զորօրինակ 'ի սկզբնաւորութեան օրհաշուխն վաճառականն յիշատակագրեցաւ պարտատէր իւրոց դրամագլուսյն (ժ՞ .), նոյնպէս և Վարկդն (1) պարտի յիշատակագրիլ իբր պարտապան յինքն ընկալեալ գումարի դրամոցն :

Ժ՞ . (1) Բոլորական գումարն երեքամսեայ, զոր մեք կարգեցաք 'ի հաշուետումարիս՝ հետևելով Անդղեացի օրինակագրին, անխսիր կարէ լինել և միամսեայ, որպէս երկամսեայ և չորեամսեայ, և այլն . յորս միօրինակ մարթ է պահել զնոյն կանոնն : Ժ՞ . (1) Խտալական հաշուեգիրք սովորաբար փոխանակ աւ

նուան վաճառականն դնեն զհաշուեմասն յիրամագլուսյն, յորում իմանան զնոյն խոկ զվաճառականն, որ է տէր այնր դրամոց :

Ամուլ զայնանէ ձնիսագլուն գոցցի յընդարձակն գործոյս :

Ժ՞ . (1) ԱՄԿԴ կամ ՄՆԴԱԽՆ : իսու, Գանուն : ամ. Անտըգ : Ամանք յօրինակագրաց պատշաճ համարեցան անձնաւոր կեզ-

ԺԵ. 'Ի զնեն կամ 'ի ստանալ զվաճառ ինչ յումեքէ, պարտատէր նշանակելի է անձն այն, որ վաճառեաց զայն: Խոկ' ի վաճառելն ինչ ումեք, պարտապան գրելի է նա, որ զնոյ էառ: Օ մըօրինակ՝ եթէ դու զնոյ առեր 'ի Վուշեղայ զերիս ծրաբս ⁽¹⁾ Հնդկակտաւոյ, Վուշեղ որ վաճառեաց քեզ զկտաւոն, լինի պարտատէր, և դու որ գնեցեր 'ի նմանէ, լինիս պարտապան: Խոկ եթէ դու վաճառեցեր Վուշեղայ, դու ինքն լինիս պարտատէր, և Վուշեղն պարտապան: Այս կանոն անփոփիխ և միշտ պահելի է յընթացս հաջուետումարին: և նովին կարգաւ յիշատակագրելի են ամենայն դիպուածք օրհաշուին: 'Ի վերայ այսր հիման հաստատին և հետեւեալ կանոնքդ:

ԺԵ. 'Ի տան կամ 'ի վճարեն ումեք զդրամն, պարտապան նշանակելի է նա, որ ընդունի զայն դրամ: Ջայս գումար դրամոց ունին մտանել ոչ միայն վճարեալ դրամքն, այլև ամենայն Զիրք կամ Բաշխոյք ⁽¹⁾, որ դիպին յառետուրս 'ի համակամ համութենէ վաճառողաց և զնողաց: Խոկ պարտատէր գրելի է Արկղն՝ այնմ գումարի ևեթ, զոր միայն վճարեալ իցէ: Օ մըօրինակ՝ եղեալ թէ ունիցիս առ Աբգար զսպարտիս Յօհ, դաշեկանաց. և 'ի կամին վճարել 'համեցուցեր զկամն նորա ընորչելքեղ զինդ դաշեկանան, և ետուր նմին Յօհ, դաշեկան ևեթ. 'ի յիշատակագրելն զայս դիպուած, Աբգարն նշանակելի է պարտապան Յօհ, դաշեկանաց, զորս իբրև թէ ամբողջ ընկալաւ 'ի քէն. խոկ Արկղն՝ որ վճարեաց միայն զերեքհարիւր դաշեկանսն, նշանակելի է պարտատէր այնմ գումարի ևեթ, որ ել 'ի զուրս յարկեղէ անտի: Շնդհակառակին այսմ՝ եթէ ընդունիցիս զդրամ յումեքէ, պարտատէր նշանակելի է անձն, յորմէ ընկալար: 'Ի նոյն գումար՝ ըստ ասացելցոց 'ի վերոյ, ունին մտանել ոչ միայն ընկալեալ դրամքն, այլև Զիրք կամ Բաշխոյք. զոր վաճառականք սովոր են համակամ ընորհել միմեանց: Օ մըօրինակ՝ եղեալ թէ ունիցիս առնուլ յԱբգարէ Կօթ. դաշեկան, և 'ի ինդրայ նորա շատասցիս Կօթ, դաշեկանաւ ևեթ, Աբգարն նշանակելի է պարտատէր

ՖԵԼ զատ, և փոխանակ Արկղ բառիս ընտրեցին վարել զբառդ Սնդդակապետ, այն է՝ Սանտրգոտար. և ըստ խոաւլ': Գտանինուէ:

ԺԵ. (1) ԾՐԱՄ: Այսպէս կոչեմք զբաղմականդուն փաթոյթն կտաւոյ, չուխայի և այլոց լաթեղնեաց. զոր խտալցիք Փէշ: այսինքն՝ Հատուած, անուանեն. և 'ի թուրք լեզու թօսի կոչ:

ԺԵ. (1) ԶԻՐՔ կամ ԲԱՇԽՈՅՔ: իտալ՝ Պանֆիլովինէ, և լուժնիթ: Այսպէս անուանին այն անենայն ընորհմունք, որք ընին 'ի տուրքաւոս, որով վաճառուողն ներէ կամ թողու դրամն ինչ 'ի գաշնադրեալ գումարէ անտի վաճառեալ իրացն:

408, դաշեկանի, իսկ Վարկղն պարտապան 400, դաշեկանին, զոր միայն ընկալաւ : 'Ե յիշատակագրել անդ զայսոսիկ դիպուածս, մարթ է փակագծիւ նշանակել անդ և զբաշխոյն կամ զշնորհեալ գումարն, որպէս ունիս տեսանել յընթացս օրհաշուիս 'ի 15, մարտի . 'ի 1. մայիսի . և այլն :

ԺԷ. Ո՞եծապէս արթնութեան պէտք են, զի 'ի յիշատակագրութիւնս օրհաշուին մի դտցին բանք երկդիմիք, պատրուակեալք և նսեմք . այլ պարզ և մնջիթթ յայտարարութիւն եղելց իրայն՝ առանց աւելորդ և աննշան բառից, կամ վայրապար կրինութեանց : Ո՞իայն վարելի են ստէպ երկոքին բառքս Պարտիք, և Պահանջը (ժամ), 'ի բացայայտութիւն յիշատակագրութեանցն ըստ իւրաքանչիւր պատշաճի իրացն . որպէս ունիս տեսանել յօրինակսդ, զոր իբր գաղափար հանդերձեալ եմք առաջի առնել :

ԺԸ. Կարգ և եղանակ յիշատակագրութեանց օրհաշուիս կարի դիւրին է և անշփոթ, մանաւանդ 'ի պարզ և յանկուտակ տուրեառս, որպիսի են սովորաբար կրպակիք մանրավաճառաց⁽¹⁾ . զի չկարօտի այլում գործողութեան՝ բայց նշանակելց սոսկապէս զվաճառումն և զտացումն իրաց յումեքէ . որպէս և զգումար տուեալ և ընկալեալ դրամոց : Զ ո՞ր օրինակ՝ եգեալ թէ Վագն գնոյ էառ . 'ի քէն զյիսուն ծրարս կտաւոյ, չունիս զայլ ինչ առնել յօրհաշուին՝ բայց նշանակել զնս պարտապան դրամոց առեալ կտաւոյն, այսպէս .

*Պարտիք, Վագն վասն 50, ծրար կտաւոյ՝ առ մի ծրար 20, դաշեկան . . . 77 . 1000 : Եթէ Վագն կամ ու իցէ գնող՝ 'ի գնել իւրում զկտաւմն վճարեսցէ և զդրամն կամ ամբողջ՝ և կամ ըստ մասին, պարտ է յայնժամ յետ նշանակելց զառաջին յիշատակագրութիւնն 'ի պարտիս նորա, յաւելուլ վերստին զնոր յիշատակագրութիւն 'ի ներքոյ նախընթացին՝ այսպէս . *Պահանջը . Վագն վասն վճարեալ դրամոցն 'ի հաշիւ կտաւոյն . 77 . . . 1000 : Եւ որովհետև ընկալեալ դրամքն 'ի ձեռաց Վագին մտանեն յԼորկ, նմին իրի պարտ է կարգել ընդ նովաւ և զայլ յիշատակագրութիւն 'ի պարտիս Լորկեղ . յայտ առնելով զընդունելութիւն դրամոցն եգելց յարկղն, այսպէս, *Պարտիք . Վարկղն վասն դրամոց՝ զոր ընկալաւ յԼուագէ 'ի զին կտաւոյն 77 . . . 1000 :, կամ զոր ինչ միանգամ տուեալ իցէ 'ի հաշիւ պարտուց իւրոց :

ԺԾ. (1) Մանրավաճառ անուանին՝ կրտակաւորք որք զստացուածս առ սակաւ սակաւ մանրամասն վաճառեն 'ի խանութս :

Զայսուիսի վաճառումունս խտացոյիք կոչեն = հնաժու : Իսկ զստացուածս ընդունուակն անուանեն ուն 'ի խանութս :

Դարձեալ դիցուք թէ դու ինքն գնոյ առեր 'ի Օ Ենոնէ Մարաշեցւոյ զ̄օօ, ծրաբս Հնդկակտաւոյ, պարտ է յօրհաշուին նշանակել զնա պարտատէր դրամոց կտաւոյն՝ այսպէս. * Պահանջը . Օ Ենոն Մարաշեցի վասն 5օօ, ծրաբ Հնդկակտաւոյ, առ մին 33, ՂՋ . 6օ, ստակ . ընդ ամենայն, ՂՋ . . . 1675օ . Օ այս դումար դրամոց 'ի վճարելդ նմա, պիտոյ է յիշատակաղբել զնա պարտապան ընկալեալ դրամոցն՝ այսպէս. * Պարտիք . Օ Ենոն Մարաշեցի վասն ընդունելութեան դրամոցն վերցյգբեալ կտաւոյն, ՂՋ, 1675օ . Առ որովհետև վճարեալ դրամքս ելանեն յարկեղէն, ուստի հարկ է նշանակել զայնս և 'ի պահանջս արկեղ՝ այս պէս . * Պահանջը . Լորկին վասն դրամոցն զոր վճարեաց Օ Ենոնի Մարաշեցւոյ 'ի զին կտաւոցն ՂՋ . . . 1675օ . Բառ այսոյիկ իմանալի են և այլ ամենայն գործառնութիւնք տուրեաւից . որպէս ունիս տեսանել 'ի կարգս օրհաշիւ գաղափարին, զոր դնեմք զինի :

ԺՂ . Եթէ պատահեցի հաշիւ հաղորդակցութեան⁽¹⁾ ընդ ումեք վաճառականի, որ ինդրեսցէ լինել հաշուընկեր մասնաւոր ստացուածոյ ինչ կամ գոյից, զոր յանձնէ 'ի վաճառումն՝ կամելով և զվաճառովն հաղորդակից առնել շաշու և վնասու այնր գոյից . յայսպիսի հաշիւս հաղորդակցութեան պահելի է նոյն կանոն, զոր աւանդեցաք վերագոյնդ . իբր զի գումար աւանդեալ իրացն նշանակելի է պահանջը, կամ պարտիք միում ումեք 'ի հաշուընկերացն . իսկ զշահն պտղաբերեալ 'ի վաճառամանէն, նշանակելի է 'ի հաշիւ հաւասարաբաժին ընկերութեան : Օ որօրինակ՝ Վւագն յուղարկէ առ Տիրան զծօ, Քուրծս⁽²⁾ բամբակի վաճառել զայնս 'ի հաշիւ հաւասարաշահ ընկերութեան: Տիրանն յընդունիլ անդ զայն բեռինսն, պարտի դնել 'ի պահանջս Վւագին զբովանդակ գումար 5օ, քուրծ բամբակին . յետոյ 'ի պարտիս նորա յիշատակաղբել զկէս ծախուցն եղելոց յընդունելութեան բամբակաբեռանցն . իսկ զամբողլ գումար ծախուցն, որ ել յարկեղէն, նշանակելի է 'ի սլահանջս արկեղ: Ուետ այնորիկ 'ի վաճառելն զայն բամբական՝ զկէս շահուն պարտ

ԺՂ . (1) Հաշիւ հաղորդակցութեան կոչի գաշն ընդ ումեք 'ի վերայ մասնաւոր վաճառելի կամ գնելի իրաց ինչ . զոր երկու անձնիք առնուն և վաճառէն, կոմ մին առնու և միւսն վաճառ . է հաւասարապէս հաղորդ ընկելով շահուն և վնասու նորա: Զայսպիսի հաշիւս խալացիք անուսանեն գննես ին Փառհիւստ-

իննէ:

(2) Քուրծ կոչեմք զբեռնապարկսն կամ զիսրդս, յորս ամփոփին բուրգք, բամբակք և այլ այսպիսիք, որք առոքին քաղաքէ 'ի քաղաք: Խալացիք Պահանձան անուանեն, և թուրքք Չուվալ կամ Գամբար:

է գնել 'ի պահանջու Աւագին . և կամ 'ի պարտիս նորա՝ զկէս վասառն , եթէ փոխան շահու՝ կորուստ լինիցի : Խակ Աւագն յիւրում հաշուետումարի պարտի նախ զգումար առաքեալ բամբակին դնել 'ի պարտիս Տիրանայ , ապա յընդունին զլուր և զշաշւ վաճառմանն , միւսանգամ պարտի նշանակել 'ի պարտիս նորա զկէս եղեալ շահուն , և կամ 'ի պահանջու նորին Տիրանայ զկէս վասառն , եթէ փոխանակ շահու վաս գիպեալ իցէ :

Եթէ յայն միջոց ժամանակի մինչև յվաճառումն բամբակին գիպեսցի առաքել կամ քարչել 'ի միմեանց փոխանակագիրս ⁽³⁾ վասն այնր հօ , քուրճ բամբակին , յիշատակագրելի են այնոքիկ ըստ կարգի այլոց փոխանակագրոց , զորոց ասասցուք յառաջնիկայդ :

Եթ . Եթէ գիպեսցի ընդունիլ կամ առաքել ումեք փոխանակագիրս , պարտ է նշանակել զայն , յիշելով թէ յումի՞ և յինչ պէտս իցեն առաքեալք . և թէ երբ վճարելիք են՝ կամ ընդունելիք զդրամն . որպէս ունիս տեսանել յօրհաշուին 'ի 2 . Քունվարի : 'ի 3 . Քունիսի : 'ի 5 . և 15 . Քուլիսի : 'ի 1 . և 8 . Աեպու : 'ի 18 . Հոկտ : . որք են զանազան փոխանակագիրք եկեալք և առաքեալք առ վաճառակիցս : Ա ասն փոխանակագրոց պարտ է 'ի մայրհաշին սահմանել զմանաւոր հաշուեմասն , ուր գրեսցին որոշակի ամենայն փոխանակագիրք :

Ի՞ս . Եթէ վաճառականն կամեսցի նշանակել 'ի հաշուետումարին և զլրկնարժէք ⁽¹⁾ հաշիւս վասն օտար-

⁽³⁾ ՓՈԽԱՆԱԿԱՎԳԻՄՔ՝ զոր իտալացիք Գամբիալ անուսանեն , է համառուսագիծ նամակ բոլնգագիլիք դրամագումարի , զոր վաճառականիք գրեն և առաքեն միմեանց 'ի փոխանցել դրամն քաղաքէ 'ի քաղաք : Կամակագիրն եթէ առաքենցի առ ոք հատուցանել դրամն այլում , յիտալացւոց կոչի Գամբիալ թուանիւն թուանիւն , այն է փոխանակագիր քարշեալ : Խոկ եթէ առաքենցի ընդունիլ դրամն յումեքէ , կոչի Գամբիալ Ռիվենու : այն է յղեալ աւանցեալ կամ յանձեալ : Փոխանակագիրն դոլով համազօր դրամց՝ կարի վաճառիլ և փոխանցիլ յայլս . զոր իտալացիք անուսանեն Շիուանէ . այսինքն՝ ըրջել կամ փոխանցել և վերագրել յայլս անուն : Զօրինակ փոխանակագրոց և զեղանակ գրութեան և

կիրառութեանն գոցես լիով յընդարձակն գործոյս :

Բայ . (1) ԿՐԱՆԱՐԺԷՔԻՔ : իտալ՝ . Տէքիս Վալւի՞մս : Այսակէս անուսանի 'ի հաշուեգիրս յիշատակագրութեանն այնց գրամոց , որք թէակտ չեն 'ի հասարակ գործածութեան քաղաքին , ստկայն վարին 'ի ստորեառու . և արժէք նոցա ստոլոր են աճիլ և նուազլ օր ըստ օրէ . յայն սակա իտալական հաշուետումարը 'ի մայրհաշիւն յաւելուն զմանաւոր գաւազան , յորում նշանակեսցին այն գրամք առընթեք սովորական գրամոց քաղաքին . որով խելամուտ լինին օգտի և վիասու յընդունելութեան և 'ի վճարման այնպիսի գրամոց : Եթէ 'ի տուչութեան կամ յընդունելութեան այսպիսի գրամոց լինիցի շահ , սովոր է յիտալացւոց

աղքի գրամոց, որք սովոր են վարիլ՝ ի տուրեառու, կարէ ըստ բերելց առթին՝ մանրամանն բացայստել զայնոսիկ՝ ի յիշատակագրութիւնս օրհաշուին՝ առանց մասնաւոր գաւազանի. և ասա ՚ի հաւաքելն զշաշիւ իւրաքանչիւր անձանց առ փոխադրելց՝ ՚ի մայրհաշիւն (ի՛Ը), պարտ է առնուլ զայս և նշանել՝ ՚ի ներքին գաւազան հաշուեմասանց մայրհաշուին՝ առընթել ամսական գումարի դաշեկանաց (ի՛Ը). Օ որօրինակ՝ եղեալ թէ ՚ի 17. յունվարի՝ Աբգար Տարսոսացի վճարելով զդրամն 1200, դաշեկանաց, տուեալ իցէ 200, արծուէկնիք դաշեկան (այն է Պարագուշ) հաշուելով զմին 6, ՀՅ. Օ այդ վճարումն կամելով յիշատակագրել յօրհաշուին, զրելի է այսպէս, *Պահանջք. Աբգար Տարսոսացի վասն վճարեալ դրամոցն, որ էր 200, արծուէկնիք, առ մին 6, ՀՅ. . . . 1200 : ՀԵտոյ ՚ի փոխադրելն զայդ ՚ի մայրհաշիւն դրելի է ՚ի ներքին գաւազան հաշուեմասին Աբգարու՝ առ պահանջագումար յունվարի ամսոցն, այսպէս. * Պարկեղէն՝ 200, արծուէկնիք . . . ՀՅ. 1200 : Բայ այսմ և այլք :

ի՛Ը. ՚ի յիշատակագրութիւնս օրհաշուին հնար է դիպել, զի երբեմն ՚ի յոլովութենէ յիշատակագրելի իրաց՝ գումար դրամոց ինչ վրիպակաւ գրեսցի ՚ի հաշիւ պահանջից, զոր պարտ էր նշանակել՝ ՚ի հաշիւ կամ՝ ՚ի գաւազան պարտեաց. և կամ ընդհակառակն : ՚ի գարման այսպիսի վրիպակաց գծագրեցաւ յօրհաշուին գաւազանն Պարտուպահանջից (ը), ուր զատաշինն կարդաւ նշանակելի են հետզետէ ամենայն գումարը և լիցէ յիշատակագրութեանց. և ասա հանդարտ մոօք զատէլի են պարտիքն ՚ի պահանջից, և զետեղելիք յիւրաքանչիւր գաւազանս (ժա) : ՀԵտոյ բոլորական գումարը երեցունց գաւազանացն ամսոյ յամիս համեմատեալը ընդ միմեանս, հարկաւ ՚ի յայտ ածեն զուղցութիւն կամ վրիպակ սպրդեալ՝ ՚ի հաշիւմն. (Հ. նա) :

ի՛Ը. ՚ի ձեւն այսր կարդի համեմատութեան գումարաց օրհաշուին՝ կարէ վահառականն յամոյ ամփս հասու լինել վիճակի տուրեառուութեանն, և իմանալ թէ յիւրաքանչիւր ամեան զինչ պարտիք, և որչափ ինչ պահանչելիք եղեալ իցեն նորաւ. Իսկ եթէ կամեսցի գիտել և զօգուռ կամ զինաս տուրեառութեան ամսոյն, կարէ դիւրաւ խելամուտ լինել, եթէ զարժէք անվաճառ մնացեալ գոյիցն (ե և Ը) յաւելցէ ՚ի

առնուռնիւլ Անշահօ գեւս Վաւաւեա. այն է Շահարժէք. այսինքն՝ գոյինս գտցես յընդարձակն դործոյս : շահ կամ օդուռ եղեալ յարժէից դրամոց : Անյլ զոյսցանն կ լիտ.

պարտիս այնր ամսոյ , և 'ի բոլորական գումարէ անտի հանցէ զգումար պահանջից ամսոյն , մնացեալն է շահ պտղաբերեալ 'ի տուրեաւութենէ այնր ամսոյ , զորոց զօրինակն ունիս տեսանել 'ի վերջ օրհաշուխն վասն ամսեանն յունլարի :

Հ Յ Ա Ն Ի Վ Ի Բ .

Կ Ա Ր Գ Մ Ա Ց Բ Հ Ա Շ Տ Ւ Տ Տ Ո Ւ Մ Ա Ր Ի Ւ

ի՞դ . Այրհաշիւ մատեանն՝ որպէս ասացաւ (ե) , պարտի յինքն բովանդակել զամենայն յիշատակադրութիւնս օրհաշիւ մատեանին , թէպէտե այլազգ դասաւորութեամբ քան զոր էինն անդ . բայց հարկ է թէ լինիցին նոյն պարտիք և նոյն պահանջը , որք միանդամ նշանակեալ կան յօրհաշիւն :

ի՞ե . Վմենայն հաշիւք անձնականք պարտին ունիլ զառանձին հաշուեմասունս կրկին երեսօք . յորոց 'ի ձախակողմեան երեմն նշանակեսցին հաշիւք պարտեաց . և յաջակողմեանն հաշիւք պահանջելեաց : Խւրաքանցիւք երեսք՝ թէ պարտակողման , և թէ պահանջակողման , բաժանելի են 'ի հնգեակ գաւազանս , յորոց չորեքին արտաքինք՝ կամ գծագրեալքն 'ի ծագս , թէ 'ի միումն և թէ 'ի միւսում կողման , ունին պարփակել զորեւին եռամական միջոցս տարւոյն՝ ըստ երեքամսեայ բոլորական գումարաց օրհաշուին (մք) : Դ չորեցունց գաւազանաց աստիք առաջինն ունի ծառայել 'ի պէտս թղթահամարոց օրհաշուին , երկրորդն՝ Վմաթուոց . երրորդն՝ Դահնեկանաց . և չորրորդն՝ Անրափողոց : Խակ հինգերորդ գաւազանն ներքին , որ լայնարձակ է քան զայլն , ունի ծառայել 'ի յիշատակագրութիւն տուրեաւո հաշուից այնր անձին , ընդ որում վաճառականն կալաւ հաղորդակցութիւն : Վայս գաւազան 'ի կողմն պարտեաց բովանդակէ զայն ամենայն ամսական գումարմն պատշաճեալս առ պարտիս այնր անձին , որք կարգաւ նշանակեալ կան 'ի չորեսին եռամսական գաւազանս եղեալս առընթեր : Այսպէս և գաւազանն , որ 'ի կողմն պահանջից , բովանդակէ զամենայն գումարս պահանջից նորա , որք առընթեր նշանակեալ կան 'ի չորեսին գաւազանսն : Խակ պարտիք և

պահանջք չորեցունց գաւաղամացս փոխադրելիք են՝ ի յիշատակազրութեանց օրհաշուին, որպէս և յայտէ (ի՞դ) :

ի՞դ. Հաշուեմասունք իւրաքանչիւր անձանց և իրայ՝ որք ունին մասնել՝ ի մայրհաշիւն, որոշելի են Արբուբենական գրանշանօք, այսպէս. թառունիկ Տարսոնացի՝ Ա. Հեթում Տարսոնացի՝ Բ. Ա. Բրկ՛ կամ Անդկապետ, Գ. և այլն. որք և ըստ պիտելցն կարեն կրկնել, եթէ թիւք հաշուեմասանց առաւելուցուն քան զերեսուն և զվեց գրանշանս մեր : Ա. յս գրանշանք արձանագրելի են և ՚ի տումար օրհաշուին՝ ի գաւազանսն գծագրեալս առընթեր պարտեաց և պահանջնից (թ) . և նշանակելի են՝ ի ժամաւն, յորում յիշատակազրութիւնք օրհաշուին փոխադրին՝ ի մայրհաշիւն : Դրութեամբ գրանշանացս յայտ լինի, թէ այն գրանշանեալ հաշիւ փոխադրեալ է՝ ի մայրհաշիւն, և թէ տարեալ է յայն հաշուեմասն, յորոյ անուն մակագրեալ է գրանշանն :

ի՞ե. Երկրթին երեաք հաշուեմասանց մայրհաշուին նշանելի են միով կամ նոյնաթիւ թղթահամարաւ, այսինքն՝ այն թուանշան որ գնի՝ ի կողմն պարտեաց, գրելի է և ՚ի կողմն պահանջնից՝ այսպէս. (1) (1) : (2) (2), և այլն : Ո թղթահամարս մայրհաշուին պիտի կոչումն առնել և յօրհաշիւն՝ ի փոխադրել անդ զիշատակազրութիւնսն (թ) : Այսպէս և թղթահամարք օրհաշուին նշանակելի են՝ ի մայրհաշիւն, յայն գաւազան՝ որ կայ առընթեր ամսաթուոց (ի՞ե) :

ԿԱՆՈՆԻ ԿԻՐԱՌՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՆԻՒԹԵԱՆ

ի՞ը. Յետ ՚ի կարգի դնելոյ զմայրհաշիւ մատեանն ըստ նախաւանդեալ գծագրութեանց, կարէ վահառականն վարել զայն՝ ի գործ ըստ առաջիկայ կանոնացս : ՚Ի կամին փոխադրել անդը զհաշիւ ուրուք, պարտ է բանաւ զերկուս երես (ի՞ե) . ուր ՚ի վերին կողմն կամ՝ ՚ի միջնահակատն նշանակելի է Վնուն անձինն, և Վականունն կամ տեղին բնակութեան . և առ նմա Դրանշանն սեփականեալ այնմանձին (ի՞դ) : Ապա հայելով յօրհաշիւն՝ քաղելի են՝ ի յունվար, ՚ի փետրվար և ՚ի մարտ յերեքամսեայ միջնոցէ անտի, նախ՝

ամենայն գումարք պարտեաց նորա , և ըստ թուոյ ամսոյն մի առ մի փոխադրելիք յառաջին եռամսական գաւազանն 'ի կողմն պարտեաց (ին) . յետոյ վերստին հաւաքելի են և ամենայն գումարք պահանջից նորա 'ի նոյն երեքամսեայ միջոցէ օրհաշուին , և նովին կարգաւ փոխադրելիք 'ի միւս երես մայրհաշուին՝ յառաջին գաւազանն , որ 'ի կողմն պահանջից : 'Ի քաղուածոյ աստի եւմսեն միայն երեքամսեայ պարտիք և պահանջը այնոր անձին , որպէս և յայտ է . բայց 'ի քաղուածէն հետզհետէ ընդ ամս ողջոյն՝ լրանան ամենայն տարեկան հաշիւք : Աստանօր վերստին յուշ առնեմք զոր կանսեցաքն յառաջագոյն , զի 'ի քաղելն և 'ի փոխադրել զիշատակադրութիւնն՝ յաւեցես յօրհաշուին զնախաւանդեալ գրանշանն (ին) առ 'ի սոսու գութիւն եղեալ փոխադրութեանն :

իթ . Հյետ փոխադրելոյ զամենայն հաշիւմն յեռամսական գաւազանս մայրհաշուին , քաղեցես 'ի գաւազանաց անտի՝ կամ 'ի նոյն իսկ յօրհաշուին , և զաւանձին մամսական գումարս իւրաքանչիւր ամսոյ՝ թէ զպարտեաց և թէ զպահանջից . զորս և տարեալ 'ի հինգերորդ գաւազանն մայրհաշուին (ին) , ըստ կարգի ամսոյն սկսեալ 'ի յունվարէ վերուստ 'ի վայր նշանակեցես անդ մի ըստ միոջէ . զպարտագումարսն դնելով 'ի ձախակողմեան գաւազանն , իսկ զգումարս պահանջից յաջակողմեանն : Այսու կարգաւ հետզհետէ զամենայն հաշիւս փոխադրելով յօրհաշուին 'ի մայրհաշիւն , յաւարտ տարւոյն գտանես 'ի սակաւատող միջոցս բովանդակեալ զհամօրէն վիճակ հաշուի այնոր անձին , որոյ և իցէ հաշուեման այն . ուր 'ի ձախակողմեան գաւազանն տեսանին ակներև . որոշակի ամենայն մամսական տուրեւառք նորա . իսկ 'ի միջին տեղով՝ բովանդակութիւնն ամսականք :

Ե . Առ 'ի ստուգել թէ արգարեւ ամենայն յիշատակադրութիւնք օրհաշուին ուղիղ և անվիճակ անցիեալ իցեն 'ի մայրհաշիւն , կարեոր է յիւրաքանչիւր եռամսական գաւազանս նորա առնել զյաւելումն գումարի նախընթաց երեսին 'ի յաջորդն . ըստ որում ունիս տեսանել յօրինակադ գաւազանաց մայրհաշուին . ուր յերես (2) պարտագումարն առ եռամսական գաւազանին , որ է 86936 : 40 , յաւելեալ կայ 'ի յաջորդ պարտագումարն առ եռամսական գաւազանին յերես (3) . որ է 5969 . և նովաւ հանդերձ ելեալ է յետին գումարին 92905 : 40 . Օայդ գումար տարցես 'ի յաջորդ երես (4) 'ի ներքոյ գումարի առ եռամսական գաւազանին , և ընդ նման գումարելով՝ զծագեալն 'ի նոցանէ տարցես 'ի յաջորդն յերես (5) . այսպէս հետ-

զհետէ մինչև ցյետին երեսն : Ոստ ասացելոցս պարտ է առնել և դք . եռամսական գաւաղաննն + ուր յերես (2) ստորին պարտագումարն՝ որ է 34289 : 40 . տանելի է 'ի յաջորդ երեսն (3) 'ի ներքոյ ստորին պարտագումարի՝ Շ . գաւաղաննն , որ է՝ 5884 : 80 և ընդ նմա գումարելով՝ զծագեան՝ 'ի նոցունց տարցես 'ի յաջորդն ըստ ասացելոցս 'ի վերոյ : Վհա այսպիսի կարգաւ պիտի յառաջել յսկզբանէ անտի մայրհաշուխն մինչեցիատարած + ոչ միայն 'ի կողմն պահանջից . ապա 'ի կատարիլ այսոցիկ յաւելմանց՝ 'ի յետին երես մայրհաշուխն ամենայն պարտագումարը և պահանջազգումարը իւրաքանչիւր եռամսական գաւաղանայն պարտին ելանել հաւասարը միում միում 'ի բոլորական գումարաց իւրաքանչիւր երեքամսեայ միջոցաց օրհաշուխն . այսինքն՝ պարտագումար առ . եռամսական գաւաղաննն 'ի յետին երես մայրհաշուխն՝ պարտի ելանել Պ . 163301 : — իսկ պահանջազգումարն՝ 217673 : — որք են բոլորական գումարը առաջին երեքամսեայ միջոցին , այսինքն՝ յունվար . փետրվար և մարտ ամսոց : Այսպէս և պարտագումար ք . եռամսական գաւաղաննն 'ի նոյն յետին երես մայրհաշուխն՝ պարտի ելանել Պ , 105658 : 70 . իսկ պահանջազգումարն՝ 95849 : 40 . որք են գումարը երկրորդ երեքամսեայ միջոցին՝ այսինքն՝ ապրիլ , մայիս և յունիս ամսոց : Ոստ այսոցիկ և երրորդն և չորրորդն , որպէս տեսանես յօրինակդ . յորմէ ստուգի և ինքնին 'ի յայտ գայ՝ թէ ամենայն հաջուք յիշատակրեալք յօրհաշիւն՝ ուղիղ և անվրէպ փոխագրեալ կան 'ի մայրհաշիւն :

Էա . Ոյաւելումն գումարաց 'ի միմեանս՝ պարտ է առնել յամայ ամիս , և յորժամ բոլորական գումարը օրհաշուխն և մայրհաշուխն ոչ համեմատեսցին միմեանց , յայնժամ ևեթ օրէն է ձեռն արկանել 'ի կետագրութիւն (1) , առ ստուգելոյ զհաշիւմն : Եթադրութիւնն ասի դրութիւնն կիտանշանին , որ լինի 'ի քննութիւնն հաշուեմատենից առ 'ի գտանել զվրիպակն . զի յետ մի առ մի համեմատելոյ զամենայն յիշատակրգրութիւնն մայրհաշուխն ընդ օրհաշիւն , 'ի գտանելն զնոսին համեմատս միմեանց , 'ի լուսանցմն դնելի է կիտանշան , որով որոշին անբաղդատքն 'ի համեմատելոց , և եթէ կայցեն թագուն և անյայտ վըիպակք , մանր խուզողութեամբ 'ի դուրս ելանեն :

Էա . (1) ԿԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ՝ զոր խոալացիք Փառականէ անուանէն . է մի 'ի գլխաւոր աշխատառութեանց յուղագրութիւնն վրբ .

պակաց 'ի հաշուեմատեանս . զոր առաւելապէս սովոր են վարել իսաւական հաշուետումարք : Տես յընդարձակն գործոյս :

Աստամնօք յուշ առնեմք նորավարժից, զի թէ գաւաղանք մայրհաշուին բազմախուռն յիշատակադրութեամբ կուտակեալք իցեն, պարտ է զրոյրական դումար հաշուի նոցա հաւաքել առ ոտս գաւաղանացն։ և 'ի ներքոյ նոցա յաւելուլ զգումարս նախընթաց երեսացն, որպէս տեսանես յօրինակդ։

Ե՞՞ ՚Վ գտամիել զվրիպակս հաշուետումարին՝ նպաստէ և քննութիւնն զրանշանաց, զոր վերադոյնդ ասացաք (ի՞ւ) դնել առ իւրաքանչիւր հաշուեմասունս մայրհաշուին։ զի որովհետեւ վրիպակք սովոր են լինել յանհամաճայնութենէ օրհաշիւ և մայրհաշիւ մատենից ընդ միմեանս, հնար է թէ զրանշան ինչ փոխանակ դնելց ՚ի սեփական յիւրում տեղող, եգեալ իցէ յայլ տեղի։ վասն որոյ պարտ է դնել և մի առ մի համեմատել, թէ գրանշանքն որոշեալք առ իւրաքանչիւր հաշուեմասունս մայրհաշուին՝ իցեն անսխալ նշանակեալք առ մի ՚ի յիշատակազրութեանց օրհաշուին։ յիթէ գտցի պէսպիսութիւն՝ ՚ի նոսա, հարկ է թէ վրիպակ ինչ սպրեալ կացցէ ՚ի հաշուետումարն։ ապա թէ ամենայնիւ համեմատք իցեն, ուղիղ է հաշիւն, և ըստ կարգի յառաջատութիւնն։

Ե՞՞ ՚Վ կատարած տարւոյն՝ կամ յայլ յո՛ և իցէ ժամանակս կամելով առնել զլկու (1) հաշուից, և իմանալ զօդուտ կամ վնաս տուրեառութեան, պարտ է նախ հաւաքել զհաշիւ ամենայն անվաճառ մնացեալ գոյից կամ ստացուածոց՝ ըստ զնոցն, որով ինքն ստացեալ իցէ։ և զայն գումար յիշատակազրել յօրհաշիւն։ Ո այդ յիշատակազրութիւն մարթ է առնել միահաւաք հատուածով ըանի, և կամ ՚ի բազում հատուածն բաժանելով ըստ զանազանութեան գոյիցն, որպէս և ախորժէ ոք։ Հետոյ վասն այնը հաշուի սպարտ է ՚ի մայրհաշիւն բանալ զմանսաւոր հաշուեմասն ինչ յետին։ որոյ ՚ի պարտիմն նշանակելի է բոլորական գումար նոցին։ որովլ լրանայ հանրական յաւելումն (շ) մայրհաշիւ տումարին, և բովանդակին ՚ի նմաառաջարակ ամենայն գումարք վաճառեալ և անվաճառ իրաց տուրեառութեան։ Լորդ՝ յետ յաւելլոյ զգումար անվաճառ գոյից ՚ի յետին ՚դ։ եռամսական գաւաղան մայրհաշուին, և ընդ նախընթացսն հաւաքելց առ ոտս գաւաղանին, ժողովնեցք ՚ի մի զամենայն գումարս գաւաղանաց։ նախ՝ զպարտակողմանն, և


Ե՞՞ (1) ԿԸ.ԻՒ. իս՛. Պէտաշիօ: տՃ. թէրազը կամ Միկան։ Առակս անուանի հանրական բազդատութիւնն հաշուից և հաւամարութիւնն պարտակողման և պահանջակողման գումարաց

ընդ միմեանս, որով ՚ի յայտ գան ինապէ և օգուտք տուրեառութեան։

ապա զպահանջակողմանն առանձին . և համեմատելով նաև զնովին ընդ բոլորական գումարով օրհաշուին , որոյ համօրէն պարտագումարն՝ որպէս և պահանջագումար ամերող տարրոյն պարտին հաւասար ելանել ընդ այսոցիկ յետին համահաւաք գումարաց մայրհաշուին (շ) . որ և համարի տարեկան կշռու հաշուետումարիս . և ապա մարթ է բացադրել բառնալով զպարտիսն՝ ի պահանջեց , կամ զպահանջն 'ի պարտեաց , որով ի յայտ գայ օգուստ կամ վնաս տուրեառութեանն : Օ ի եթէ սպարտիք առաւելուցուն քան զպահանջն , վաճառականն ունի շահս 'ի տուրեառութենէն . իսկ եթէ պահանջքն առաւել իցեն քան զպարտիս , փոխանակ շահու վնաս ունի (ի՞դ) : Օ օրինակ ասացելոց գտանես 'ի վերջ () օրհաշուին . և Ո՞յցի հաշուին :

Պահանջագումար նորին ամսոյ 18492 : —

Հ. 1) ԱԵՐԳՈՐԾՎԱԿԱՆ կամ ՕԳՏԱՄԱՏԱՑՅԱՅԻՆ կամ ՎՆԵԱՍԱԲԵՐԻ: իմ". Ան-
դիք: Այսպէս անուանին պարտակողանեց հաշուետումարին. որը ցուցանեն զօգուտ տուրքատուռեթեանն: Խակ պահանջակող-



Այլանձ բոլորական գումարս . Դ 44778 : 100
 Հորմէ հանեալ զվարեալսն 'ի նոյն դեկտեմբերի , որ է գումար պահանջակողման 2688 : —
 միայ բոլորական գումարն կամ Աշխատաշին Դ 42090 : 100

ՀԵ. ՚Ի կամիլն առնել զիշտու մայրհաշուին՝ պահելի է և այս կանոն, որովը ստ կարգի և անվրեպ ՚ի զլուխ ելանէ : ՚Ի գումարել անդ զշաշիւմն առ ոսս գաւաղանաց՝ նախ քան զիփիսադրել ՚ի յաջորդ երեսն (Ը), առցես գտարեբրութիւնն որ ընդ մէջ համօրէն պարտագումարի և պահանջագումարի ըրեցունց գաւաղանացն միանգամայն առեալ այնը երեսին . և համեմատեսցես ընդ տարբերութեան գումարաց կըույն, որք կանն ՚ի միջին գաւաղանի անդ (իթ. լ՛Հ): ՚Աթէ տարբերութիւնն երկոցունց հաւասար չէցին միմեանց, ուղիղ և անվրեպ են գումարքն . ապա թէ ո՛ւ, միթպակի կայ :

Օղորմնակ՝ յերես (2) յերկրորդ թղթահամար մայրհաշուին չորեքին գաւաղանագումարք պահանջիցն միանդամայն առեալք , են 70 199197 : 60 իոկ գաւաղանագումարք պարտեայն են 165688 : 40

Տարբերութիւնն երկոցունց գումարացն դը 33509:20
Կը-ադումար Պահանջլիցն 'ի ներքին գաւաղանի է դը 75600: —
Խակ Պարտեացն է 42090:100

Հարբերութիւնն հաւասար վերնոյն. 72 33509 · 20

Վաս այսպիսի զգուշաւոր կարգաւ և քննութեամբ հաշիւք ամենայն երեսաց հետղվետէ ստուգին. և որ ինչ միանդամ անյօյտ վրիպակ սոլրդեալ կայց է՝ ի մայրհաշիւն, լինքնին գայ ՚ի ծանօթութիւն :

Աստանօր յուշ առնեմք և զայս , զի բոլորական գումարք առ ոտս գաւազմաց՝ թէ յօրհաշխն , և թէ ՚ի մայրհաշխն մի նշանակեսցին՝ մինչ չե է ամենայնիւ ստուգեալ ջնդրիտ ուղղութիւն և անվթիպութիւննոց առ զի յետ միանգամ ճշմարիտ լինելոյ , անհնար է թէ ստեսցի . վասն որոյ և չէ օրէն փոփոխութիւնս առ նել երբեք ՚ի նշանակեալ գումարն :

ԵՇ . Օ ամենայն նախաւանդեալ կարգս և զկանոնս Պարզագիր Հաշուետումարիս քաջ ՚ի միտ առնու ոք , եթէ ուշադիր քննութեամք հայեսցի յաւացիկայ (յօրհաշխն , և յոր զկնի Վայրհաշխն . յորս երկու վաճառակիցք կամ հաշուենկերք Ուսունիկ և հեթում Տարսոնացիք ունելով զիւրեանց հաւասարաշափ դրամագլուխս՝ իւրաքանչիւրն ՇՋ . 36000 , գնեն յարկդ վաճառաշահութեան ՇՋ . 72000 , և սկիզբն առնեն առուրեալից : Վակայն եթէ ոք կամիցի առանձին և անընկեր շահավաճառ լինել , կարէ զամբողջ դրամագլուխն 72000 , ՇՋ ՚ից՝ համարել միոյ ուրուք . և պահել զնոյն կարգ , որ կանոնաւորի վասն երկուց :

O P S E C T F F

1826

S U P H O G N

1139790

100000

ՊԱՐՏԻՔ					ԱՄՓԱԿ	ՏԵՐՄԱՆ ՅՈՒՆԻՎԵՐՏԻ 1826:					ՊԱՐՏՈՒ ՊԱՀԱՎԱԾՔ	ՊԱՀԱՎԱԾՔ					
ԴՎ	ՍՊ	ԳՒ	ԵՐ			ԴՎ	ՍՊ	ԵՐ	ԳՒ	ԵՐ		ԴՎ	ՍՊ	ԵՐ	ԳՒ	ԵՐ	
72000	—	Գ	2	1	Պահանջ։ Ժարսոնացի վասն իւրոյ Դրամադլիսոյն։						56000	—	1	Ա	56000	—	
				2	” Հեթում Տարսոնացի, նոյնպէս։						56000	—	1	Բ	56000	—	
24000	—	Զ	4	2	Պարտի։ Աւրեկն վասն ընկալեալ գրամոցն։						72000	—					
				2	Պահանջ։ Աւթիկ Սակցի, 40. Կարաս գինի կիսպոսեան 600ական դահկանաւ։						24000	—	4	Զ	24000	—	
24000	—	Զ	4	3	” Փիսանակաղիք վճարելիք քարշեալն Ավթիկն ստորագրեցաւ, որ է արժէք գինույ նորա. վճարելիք ՚ի 1. սեպտեմբեր։						24000	—	5	Լ	24000	—	
				4	Պարտի։ Ավթիկ Սակցի վասն քարշեալ փիսանակագրոցն։ որ ստորագրեցաւ։					24000	—						
420	—	Գ	3	5	Պահանջ։ Աւրեկն վասն ծախուց նաւոզէի, մաքսի, և այլն. 40. Կարաս կիսպոսեան գինույ, ըստ հաշուչեցոյ մուրժակացն, որք պահին։						18000	—	2	Գ	18000	—	
				6	” Չենն Մարաշեցի, վասն 500. ծրար հնդկակտաւոյ, համն 33:60.					16750	—	5	Լ	16750	—		
600	—	Լ	7	7	” Եղինիկ Արենեցի, վասն 1000. կանգուն չուխայի՝ 18ական դահկանաւ։					18000	—	5	Թ	18000	—		
				8	” Մուշեղ Լամբանացի. վասն 1000. կանգ՝ բեհեզզյ, 9. դահկանաւ։					9000	—	6	Ժ	9000	—		
1200	—	Լ	8	9	” Աւրեկն վճարեալ վասն փիսագրութեան, և այլն. այսոցիկ վահառուց։					492	—	2	Գ	492	—		
				10	Պարտի։ Տիրան Տարսոնացի, վասն 20. կանգուն չուխայի՝ 21. դահկանաւ։					420	—						
210	—	Ե	4	11	” Դահնան Տարսոնացի, վն 10. կանգ՝ չուխի. նոյնպէս 21.					210	—						
				12	” Բենիկ Տարսոնացի, վն 20. կանգ՝ չուխի. նոյնպէս 21.					420	—						
1611	80	Խ	8	13	” Եղինին. վն 5. ծրար հնդկակտաւոյ համն 36. դահկանաւ։					180	—						
				14	” Աւգար Տարսոնացի վն 1. կարաս կիսպոսեան գինույ.					1200	—						
1000	41	80		15	” Բիւրաս Տարսոնացի վն 1. կարաս կիսպոսեան գինույ.					1200	—						
				16	” Եղինին, վասն 20. կանգուն չուխայի՝ 20:70.					411	80						
					Գրումար Յունիվերտամանոյ					282283	80		182242				

Պ Ա Բ Տ Ւ Ք

Ա Մ Ա

ՎՎ	ՍՐ	ԳՒ	ԵՐ	Ա Մ Ա
100041	80			
420	—	Ճ	8	
1029	20	Կ	9	12
840	—	Մ	11	
420	—	Հ	9	
630	—	Զ	10	15
420	—	Ղ	10	
823	40	Ց	12	
				17
4200	—	Գ	2	Պահանջ.
240	—	Գ	3	Արդարէ.
115	40	Ե	4	
226	80	Լ	7	
				21
1200	—	Գ	2	Պահանջ.
				Պարունակ.
221	80	Ճ	8	
221	80	Խ	8	25
535	40	Կ	9	
453	40	Մ	11	
227	80	Հ	9	27
532	60	Զ	10	
227	80	Ղ	10	
445	40	Ց	12	29

ՅՈՒՆՎԱՐ. 1826:

Գոռամար Յունվար ամսոյ

ՊԱՐՄՈՒ
ՊԱՀԱՆՁԲ

Պ Ա Հ Ա Ն Զ Ք

ՎՎ	ՍՐ	ԵՐ	ԳՒ	ՎՎ	ՍՐ
282285	80			182242	
420	—				
4020	20				
840	—				
420	—				
630	—				
420	—				
823	40				
1200	—	6	Խ	1200	—
240	—				
115	40				
226	80				
1200	—	8	Խ	1200	—
221	80				
221	80				
535	40				
453	40				
227	80				
532	60				
227	80				
445	40				
110265	40				
				291907	40
					184642

ՊԱՐՏԻՔ				ԱՐԴՐԱ	ՓԵՍԲԱԿԱՐ. 1826:				ՊԱՐՏԻՔ	ՊԱՐՏԻՔ			
ՎՎ	ՄՊ	ԳՒ	ԵՐ		ՎՎ	ՄՊ	ԵՐ	ԳՒ		ՎՎ	ՄՊ	ԵՐ	ԳՒ
110265	40				Նախընթաց գումար Յունվար տասոյ				294907	40			
624	—	Դ	3	2	Պերիկ. Տիրան Տարսոնացի վան կարս կիպրոսեան գինւոյ				624	—			
1224	—	Մ	11		" Բարիկ Տարսոնացի վա 1. կարս կիպրոսեան գինւոյ				1224	—			
445	40	Լ	7		" Բենիկ Տարսոնացի վա 40. կանդ". բենէզզոյ. առ մին 11. ՊՎ. 10.				445	40			
185	100	Ե	4	5	Պեհան վասն այլեալ մանը ծախուց նախընթաց ամսեան				60	—	2	Գ	60
					5 Դանան Տարսոնացի վասն 5. ծրար հնդկակտաւոյ, առ մին 37. ՊՎ. 20.								
571	80	Խ	8		" Բերաս տարսոնացի վա 10. ծրարի նոյնպէս . 37. 20.				571	100			
453	80	Յ	12	7	" Ալքս Այսակցի վա 40. կանդ". բենէզզոյ. առ մին 11. ՊՎ. 40. ստակ				453	80			
2988	40	Ճ	11		" Զաւան Այսակցի վա 1. կարս կիպրոսեան գինւոյ				1200	—			
					վա 40. կանդ". չուխ". առ մին 20. ՊՎ. 70. ստկ				825	40			
					20. կանդ". բենէզզ. առ մին 11. 10.				221	80			
					20. ծրար հնդկակտաւու". առ մին 37. ՊՎ. 20.				743	40			
624	—	Գ	2	10	Պեհան Տիրան Տարսոնացի վնարեալ մեղ ՚ի հաշիւ գինւոյ				624	—	3	Դ	624
840	—	Դ	5		Պերիկ. Արկին վա ընկալեալ գրամոցն ՚ի Տիրան Տարսոնացոյ				624	—			
420	—	Ե	4		" Տիրան Տարսոնացի վա 40. կանդ". չուխ". առ մին 21.				840	—			
720	—	Լ	7		" Դանան Տարսոնացի վա 20. կանդ". նոյնպէս . 21.				420	—			
743	40	Մ	11	15	" Բարիկ Տարսոնացի վա 20. ծրար հնդկակտաւոյ, առ մին 56.				720	—			
					Պեհան Տարսոնացի վա 20. ծրար հնդկակտաւու", առ մին 57. ՊՎ. 20.				743	40			
